ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

«ԿԱՐՍ» ԹԵՐԹԸ

Կարսի մարզի սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրության համար կարևոր աղբյուր է հանդիսանում «Կարս» թերթը[1]։ Նրանում բազմակողմանիորեն արտացոլված է մարզի սոցիալ-տնտեսական և հասարակական կյանքը։

«Կարս» թերթը հիմնադրվել է 1882 թ. և հրատարակվել է ավելի քան 35 տարի մինչև 1917 թ. Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը։ Ներկայումս «Կարս» թերթի լրիվ կոմպլեկտը պահվում է Լենինգրադում՝ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի գրադարանի մամուլի ֆոնդերում, որոշ համարներ կան նաև Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան գրադարանում։

«Կարսը» մարզում լույս տեսած միակ պարբերականն էր։ Այս ոչ մեծ չափսի, 4—6 էջանոց թերթը լույս էր ընծայվում շաբաթը մեկ անգամ՝ տարեկան ընդամենը 52 համար։ «Կարս» շաբաթաթերթը Կարսի մարզի պաշտոնական օրգանն էր և անմիջականորեն ենթարկվում էր զինվորական նահանգապետին։ Թերթի ամենաառաջնահերթ քաղաքական նպատակն էր՝ նպաստել մարզում նորահաստատ իշխանության ամրապնդմանը, պաշտպանել գոյություն ունեցող կարգերը և միաժամանակ գործնական օժանդակություն ցույց տալ նահանգապետին՝ հնարավորին չափ դյուրացնելու համար մարզի առօրյա կառավարումը։ Թերթի առաջնորդողներում կենտրոնական տեղ են գրավում պաշտոնական հրամանները, հաղորդագրությունները, ինչպես նաև քաղաքական լուրերը։ Հանդիսանալով կառավարության ու իշխող դասակարգերի պաշտոնական օրգաններից մեկը, նա իր համարներում առատորեն հրապարակում էր տեղական ու բարձրագույն իշխանությունների օրենքներն ու հրահանգները, տարածում ու մասսայականացնում ցարիզմի քաղաքականությունը։ Սակայն, չնայած թերթի քաղաքական այդպիսի ուղղվածությանը, նրանում կա բավական հարուստ նյութ մարզի և ընդհանրապես այդ ժամանակաշրջանի պատմության շատ հարցեր վեր հանելու համար։

Այդ տեսակետից առանձնապես արժեքավոր են մարզի տնտեսության պատմությանը վերաբերող նյութերը։ Թերթում լույս են տեսել մարզի նահանգապետների ամենամյա հաշվետվությունների մեծ մասը, ինչպես նաև առանձին օկրուգների և տեղամասերի պետերի հաղորդագրությունները։ «Կարսում» բավականին տեղ է հատկացված մարզի ագրարային հարաբերություններին՝ մարզի հողային հանձնաժողովի գործունեությանը, հողաբաշխման ու հողակարգավորման հարցերին, հողատիրության ձևերի, հարկային ռեֆորմների պատմությանը, ցարիզմի վերարնակեցման քաղաքականությանը և այլն։ Նրանում կան հարուստ վիճակագրական տվյալներ մարզի սոցիալ-տնտեսական զանազան բնագավառների մասին։ Թերթը լայնորեն օգտագործել է մարզի վիճակագրական վարչության հավաքած տվյալները։ Բերվում են հետաքրքիր տեղեկություններ գյուղատնտեսության տարբեր ճյուղերի զարգացման վերաբերյալ[3]։ Զգալի տեղ է հատկացվել մարզի առանձին վարչական շրջանների ու գյուղերի տնտեսական նկարագրությանը նվիրված հոդվածներին և ակնարկներին[4]։ Առանձնապես արժեքավոր են տեղերից ուղարկված թղթակցություններն ու նամակները։ Հատկանշական է, որ դրանք շատ հաճախ լույս էին տեսնում իրենց նամակագիր բնակիչների ստորագրությամբ։ Տեղերից ստացվող նյութերում արծարծվել են մարզի բնակչության տարբեր խավերի կենսական խնդիրները, որոնցից մենք պատկերացում ենք կազմում մարզի

---

1 «Կարս» թերթի առանձին տարիների նյութերը օգտագործել է պատմական գիտությունների դոկտոր Ա. Մ. Պողոսյանը, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կարսի մարզում (1878—1920 թթ.), Երևան, 1961։

2 Տե՛ս «Карс», 1883, №№ 3, 6, 7, 11, 24, 32, 49, 1884 № 7, 1885 № 3, 1886 №№ 2, 8, 16, 1887 №№ 26, 41, 1893 № 8, 1898 № 42, 1899 № 43, 1903 № 2, 1904 №№ 24, 25, 26, 1907 № 32։

3 Նույն տեղում, 1890 № 30, 1910 № 29, 1911 № 46, 1912 № 26, 1913 №№ 15, 52, 1914 № 10։

4 Նույն տեղում, 1886 №№ 28, 31, 1910 №№ 23, 28, 35, 37, 1912 №№ 48, 50։

բնակչության և մասնավորապես գյուղացիության դրության մասին։ Անուղղակի ձևով ակնարկվում էին գյուղացիական բողոքագրերն ու գանգատները, որոնցում մարզի բնակիչները հայտնում էին իրենց զանազան կարիքների, գյուղում տիրող անիրավությունների մասին[5], լիեստոնի, հայտարարությունների բաժիններ և այլն։

Այս բոլորից բացի, թերթում լույս են ընծայվել որոշ աշխատություններ։ Դրանցից առանձնապես հիշարժան են հնագետ Դ. Մակրաձեի «Կարսի մարզի պատմա-ազգագրական ակ-

ВТОРНИКЪ, 10 АПРѢЛЯ 1901 ГОДА

№ 15

ВЫХОДИТЪ ПО ВТОРНИКАМЪ

Թերթի համարներում կցկտուր տեղեկություններ կան նաև գյուղացիական հուզումների ու հատկապես հրկիզումների վերաբերյալ[6]։

Թերթն ունեցել է նաև բանասիրության, ֆենարկը» (1883 թ.) և թերթի երկարամյա խմբագիր, փոխգնդապետ Բ. Ս. Էսաձեի «Կարսի մարզի ուրվագծերը» (1913 թ.) աշխատությունները։

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

---

5 Տե՛ս նույն տեղում, 1900 №№ 19, 21, 1907 № 7, 1909 № 40։

6 Տե՛ս նույն տեղում, 1887 №№ 46, 48, 1890 № 52, 1894 № 5, 1895 № 20, 1900 № 49, 1904 № 2, 1905 № 48, 1907 №№ 30, 32։